

Խորանարդիկներ

Փոքրիկ տղան խաղում է խորանարդիկներով: Նա ունի N խորանարդիկ: Բոլոր խորանարդիկները նույն չափի են:

Տղան սկզբում առավելագույնը K խորանարդիկ դնում է իրար կողքի: Ապա սկսում է դրանց և միայն դրանց վրա նոր խորանարդիկներ դնելով պատ շարել: Ամեն խորանարդիկ նա դնում է ճիշտ մեկ խորանարդիկի վրա: Ամենաբարձրը պատի առաջին սյունն է: Յուրաքանչյուր հաջորդ սյուն կազմված է լինում առավելագույնը նույնքան խորանարդիկից, ինչ նախորդը: Այսինքն, N խորանարդիկներից պատրաստված պատն իրենից ներկայացնում է չաճման կարգով դասավորված առավելագույնը K սյուների հաջորդականություն:

Քանի՞ տարբեր եղանակով է կարելի N խորանարդիկներից նկարագրված եղանակով առավելագույնը K լայնության պատ կառուցել:

Մուտքը

Մուտքում տրված են N ($1 \leq N \leq 1000$) և K ($1 \leq K \leq N$) թվերը:

Ելքը

Ելքում պետք է արտածել մի թիվ՝ պատ շարելու եղանակների քանակը: Քանի որ այդ թիվը կարող է մեծ լինել, արտածել 1000007 -ի վրա բաժանելու արդյունքում ստացված մնացորդը:

Օրինակ

Մուտքը.

5 2

Ելքը.

3

Մուտքը.

5 3

Ելքը.

5